Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
օգոստոսի 24-ի N 1317 - Ն որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ

1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշի տարրերն են՝ վահանը, սուրը, առյուծը և գանձարկղը:

2. Վահանը՝ հասարակության և մարդու իրավունքների պաշտպանության, սուրը՝ արդարադատության և պատժի անխուսափելիության խորհրդանիշերն են:

3. Վահանը մոխրագույն է՝ մուգ մոխրագույն եզրագծով: Առյուծն ու գանձարկղը ոսկեգույն են, իսկ ընդհանուր ետնապատկերը (ֆոնը)՝ մուգ և բաց կապույտների համադրությամբ:

4. Վահանն ուղղահայաց հնգանկյուն է, որի վերևում տեղադրված են Հայաստանի Հանրապետության զինանշանն ու Հայաստանի Հանրապետության դրոշը:

5. Առյուծը պատկերված է վահանի վրա՝ կենտրոնում: Այն ուժի խորհրդանիշն է, ունի կանգնած դիրք և թաթով պահպանում է գանձարկղը, որը խորհրդանշում է այն արժեքները, որոնք ենթակա են պաշտպանության հանցավոր ոտնձգությունից: Առյուծն ունի երախը բաց տեսք, որը խորհրդանշում է խիզախությունը, հզորությունը:

6. Առյուծից ներքև՝ մուգ կապույտ ժապավենի վրա, սպիտակ տառերով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

24.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ